| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օրենսդրության կատարելագործում, օրենսդրական բացերի լրացում) | | |
| **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն** | | | | |
| Ծրագրի հերթական համարը | Նպատակը | Միջոցառումների անվանումները | Միջոցառումների իրականացման արդյունքները | Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Կրթություն | | | | |
| 3 | Նախադպրոցական կրթության մատչելիության ընդլայնում՝ 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնելով 85 տոկոսի | 3.1 Առնվազն 500 մանկապարտեզի և նախակրթարանի կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման համար հաստատություն ների՝ցանկում ընդգրկման չափանիշների և մեթոդաբանութ յան մշակում | Նախակրթարանների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման համար հաստատությունների՝ ցանկում ընդգրկման չափանիշները մշակվել են, ցանկերը ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Ներկայում ցանկը համալրման փուլում է: | ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացվել է առաջարկ՝ վերանայել ցանկը, ինչը պահանջում է լրացուցիչ ժամանակ: Ժամկետ՝ 2021թ. նոյեմ-բերի 3-րդ տասնօրյակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 3.2 Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակային վերանայում. «Նախադպրոցա կան կրթական ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Նախադպրոցական վաղ մանկության տարիքի երկրորդ խմբի կրթական համալիր ծրագիրը» փորձարկելու նպատակով հաստատելու մասին» N55-L, «Նախադպրոցական միջին խմբի կրթական համալիր ծրագիրը» փորձարկելու նպատակով հաստատելու մասին» N56-L, «Նախադպրոցական կրտսեր երկրորդ խմբի կրթական համալիր ծրագիրը» փորձարկելու նպատակով հաստատելու մասին» N57-L, «Նախադպրոցական ավագ խմբի կրթական համալիր ծրագիրը» փորձարկելու նպատակով հաստատելու մասին» N58-L, «Նախադպրոցական կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիրը» փորձարկելու նպատակով հաստատելու մասին» N59-L, «Նախադպրոցական վաղ մանկության տարիքի առաջին խմբի կրթական համալիր ծրագիրը» փորձարկելու նպատակով հաստատելու մասին» N60-L հրամաններով՝ հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրեր՝ տարիքային բոլոր խմբերի համար:<br>2022 թվականի առաջին կիսամյակում «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մշակված ուսումնական նյութերի և իրականացված վերապատրաստումների արդյունքում վերոնշյալ ծրագրերը 2022-2023 ուսումնական տարում կփորձարկվեն հանրապետության մի շարք նախադպրոցական ուսումնական հաստատություններում: | «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (ԿԶՆԱԿ) աշխատակազմի համալրման աշխատանքների տևականության, համապատասխան մարդկային ռեսուրսների (համապատասխան մասնագետների) պակասի պատճառով միջոցառման կատարումն իրականացվել է ժամկետի ոչ էական շեղումով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Ժամկետ՝ 2021թ. նոյեմ-բերի 3-րդ տասնօրյակ |
| | | 3.7 Նախադպրոցա կան այլընտրանքային ծախսարդյունա վետ մոդելների ներդրում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 26-ի N20-Ն հրամանով հաստատվել է «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների և դրանց ներդրման կարգը»:<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2021 թվականին նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթներում հաղթող է ճանաչվել 10 բնակավայր (համայնք)՝<br>1) Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի Գետափ բնակավայր<br>2) Արագածոտնի մարզի Եղնիկ համայնք<br>3) Արագածոտնի մարզի Լեռնարոտ համայնք<br>4) Արագածոտնի մարզի Սուսեր համայնք<br>5) Արագածոտնի մարզի Շղարշիկ համայնք<br>6) Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք<br>7) Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք<br>8) Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայր<br>9) Շիրակի մարզի Սարապատ համայնք<br>10) Արագածոտնի մարզի Ակունք համայնք:<br>Վերոնշյալ բնակավայրերին տրամադրվել են դրամաշնորհներ, և այս համայնքներում կներդրվի մեկական նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդել (ընդհանուր 10-ը): | |
| 4 | Անցում համընդհանուր ներառման՝ հանրապետության բոլոր նախադպրոցական | 4.1 Նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման | Մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և պետական փորձագիտական եզրակացության է ներկայացված «Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծը: Փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո, իրավական ակտի | Իրավական ակտի ընդուն-ման ժամկետի ուշացումը պայմանավորվ ած է տարբեր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հաստատություններում | գործիքակազմի մշակում և հաստատում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով | նախագիծը անհրաժեշտության դեպքում կվերանայվի և կներկայացվի հաստատման: | շահառու խմբերի հետ՝ նախագծի մշակման ընթացքում առաջացած լրացուցիչ քննարկումնե-րի անհրաժեշ-տությամբ: Ժամկետ՝ 2021թ. դեկ-տեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 5 | Ուսուցիչ-դաստիարակների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրում | 5.2 «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» և «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստման կարգերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանների ընդունում | 1. Մշակվել, սահմանված կարգով շրջանառվել ու պետական փորձագիտական եզրակացության է ներկայացվել «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծը:<br>2. Մշակման փուլում է «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծը: | Միջոցառման կատարման ուշացումը պայմանավորված է նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխա-տողների վերապատրաստման և հետագայում աշխատանքայ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ին առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրման համար համապատասխան ֆինանսական միջոցների ճշգրտումների անհրաժեշտությամբ: Ինչպես նաև հաշվի առնելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կան աշխատողների վարձատրության մեխանիզմի առանձնահատկությունները տարբեր համայնքներում՝ անհրաժեշտություն է առաջացել կարգավորման հարցը լրացուցիչ քննարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ: Ժամկետ՝ 2021թ. նոյեմ-բերի 3-րդ տասնօրյակ |
| 8 | Կառուցել, հիմնանորոգել և | 8.1 Շենքերի սեյսմիկ կայունության, | Դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ցանկում ընդգրկելու մեթոդաբանությունն ու չափորոշիչները հաստատված են ՀՀ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ապահովել դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով | բեռնվածության, գյուղական համայնքներում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման, շինարարական աշխատանքներին զուգընթացան հրաժեշտ գույքով և սարքավորում ներով ապահովելու սկզբունքներին համահունչ՝դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգ ման ցանկում ընդգրկման չափանիշների ու մեթոդաբանության կազմում | վարչապետի 2021 թվականի հուլիսի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» N 790-Լ որոշմամբ:<br>Միջոցառման կատարումն ապահովելու նպատակով դպրոցների նախնական ցանկը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | |
| | | 8.2 Մշակված մեթոդաբանության և սկզբունքների համաձայն՝առնվազն 300 դպրոցների ընտրություն և վերջնական ցանկի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ | Մշակված մեթոդաբանության և սկզբունքների համաձայն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել տեղորոշված 165 հանրակրթական ուսումնական հաստատության ցանկ:<br>Ցանկը ներկայումս համալրման փուլում է: | Ցանկը վերջնական չի կարող լինել, քանի որ ՀՀ ԿԳՄՄՆ-ն շարունակում է ստանալ ցանկի համալրման առաջարկներ՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներից, ՀՀ տարածքային կառավարման և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ենթա-կառուցվածք-ների նախա-րարությունից, ՀՀ մարզպե-տարաններից, ուսումնական հաստատությո ւններից, շա-հագրգռ այլ կառույցներից ու ՀՀ քաղա-քացիներից: Ժամկետ՝ 2021թ. նոյեմ-բերի 3-րդ տասնօրյակ |
| 19 | Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան | 19.1 Որակավորում ների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատաս խան որակավորում ների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում և հաստատում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով | Բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչների մշակման և հաստատման գործընթացից անցում է կատարվել ուսումնառության վերջնարդյունքների հիմքով բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակների մշակման գործընթացին:<br>Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատվել են «Իրավագիտություն» (50-Լ, 30.11.2021թ.), «Պատմություն» (53-Լ, 30.11.2021թ.), «Ֆիզիկա» (52-Լ, 30.11.2021թ.), «Ճարտարապետություն» (51-Լ, 30.11.2021թ.), «Սոցիոլոգիա» (49-Լ, 30.11.2021թ.), «Սոցիալական աշխատանք» (48-Լ, 30.11.2021թ.) և «Գյուղատնտեսություն» (47-Լ, 30.11.2021թ.)՝ որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերը:<br>Որակավորումների ոլորտային շրջանակները հիմք են հանդիսանալու բարձրագույն ուսումնական հաստատությունների համար՝ մշակել կրթական | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ծրագրեր, որը հնարավորություն կընձեռի ապահովել առավել ճկուն կրթական ծրագրեր և ապահովել բուհ-աշխատաշուկա կապը:<br>Վերոնշյալ աշխատանքներում ընդգրկվել են ներկայացուցիչներ գործատու կազմակերպություններից, բարձրագույն ուսումնական հաստատություններից, ուսանողներից, շահառու հանդիսացող գերատեսչություններից և այլն: | |
| Մշակույթ | | | | |
| 36 | Ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովում | 36.1 «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագիր | «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով նախարարությունն աջակցել է ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում լույս տեսնող 6 տպագիր, գրական 11 և մշակութային 12 տպագիր և էլեկտրոնային պարբերականների: | |
| | | 36.3 Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով, ինչպես նաև դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում» | 2021 թվականին դրամաշնորհների տրամադրման գործընթացը անցկացվել է 11 անվանակարգում:<br>Դրամաշնորհային մրցույթի շրջանակներում (ժամանակակից արվեստի ոլորտներում) 11 անվանակարգերում ստացվել է 164 հայտ, որից ֆինանսավորվել է 64 նախագիծ:<br>Մրցույթն իրականացվել է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն և 2021 թվականի հունվարի 27-ի N 97-Ն որոշումների համաձայն:<br>Դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսման նպատակով աջակցություն է ցուցաբերվել հետևյալ ծրագրերին.<br>• «Կողք կողքի» ներառական երաժշտական արտ փառատոն<br>• Հայաստանի գլխավոր ժամացույցի տեղադրման 80-ամյակի նվիրված առցանց համերգ<br>• «Արվեստասերունդ» կրթական ծրագիր,<br>• «SUMMEET» Հայաստանում ժամանակակից պարի միջազգային ամառային փառատոն<br>• «Բիմ-Բոմ» հեռուստահաղորդաշար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | • «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի շրջանակներում վարպետության դասերի իրականացում՝ երիտասարդ մասնագետների մասնակցությամբ<br>• «Խղճմտանքի ձայներ» արևմտահայերեն թատերգություն<br>• «1080 ժամ» ցուցահանդես: | |
| 39 | Մշակութային ժառանգության պահպանության ներառականության ապահովում, հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացում | 39.2 Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ներառական ծրագրեր | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դրամաշնորային մրցույթի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ծրագրեր» անվանակարգի շրջանակում իրականացվել են 16 ծրագրեր, որոնք ուղղված են եղել Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, փոխանցմանը և տարածմանը: Ծրագրերի աշխարհագրական ընդգրկումը բավական լայն է՝ ՀՀ 8 մարզերի (Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Գյումրիի, Արմավիրի, Տավուշի, Արագածոտնի) 60-ից ավել համայնքներ, շահառուների թիվը՝ շուրջ 2000: | |
| | | 39.3 Հասարակության խոցելի խմբերի համար նպատակային միջոցառումների կազմակերպում | 2021 թվականին մշակութային դրամաշնորհային ծրագրերով սահմանվել է առանձին անվանակարգ՝ «Ժամանակակից արվեստի ոլորտի ներառական ծրագրեր և նախագծեր»:<br>Ժամանակակից արվեստի և մշակութային կրթության ոլորտներում ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ 2021 թվականին իրականացվել է «Կինոդպրոց առանց սահմանների» հաշմանդամություն ունեցող անձանց համար ծրագիրը, «Կողք կողքի» ներառական երաժշտական արտ փառատոնը, «Ձեռք ձեռքի տված» ծրագիրը, «Միասին» ներառական մանկապատանեկան ցուցահանդեսը, «Նավարկություն» ժամանակակից արվեստի կրթական, ներառական նախագիծը, «1080 ժամ» ցուցահանդեսը: «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային փառատոնի ներառական ծրագրերին մասնակցել են հաշմանդամություն ունեցող շուրջ 450 անձինք: «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ ներքո գործող «Կատարողական արվեստի ներառական արվեստ» կենտրոնում 2021թ. դեկտեմբերի 1-ից մեկնարկել են ուսումնական դասընթացներ: ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող թատերահամերգային կազմակերպությունները պարբերաբար տրամադրում են մշակութային | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | միջոցառումներից օգտվելու հնարավորություններ հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց: | |
| 45 | Մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացում | 45.1 «Դասարան-Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի իրականացում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ և աջակցությամբ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնն առաջին անգամ 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրեց «Դասարան + դասական» թատերական կրթական ծրագիրն: 2020 թվականին կորոնավիրուսային համաճարակի պատճառով «Դասարան + Դասական» կրթական ծրագիրն անցել է առցանց ձևաչափի՝ օգտագործելով ֆեյսուբուքյան հարթակը:<br>2021 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին իրականացել է «Դասարան + դասական» կրթական ծրագրի համապետական փուլը: Մրցութային կարգով ընտրվել է 60 աշակերտ: Հուլիսի 31-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի Փոքր բեմում սաները ծրագրի օրերին բեմադրված ներկայացումները հանձնեցին հանդիսատեսի դատին: Օգոստոսի 2-ին ծրագրի շրջանավարտները պարգևատրվել են հավաստագրերով: Նրանք հնարավորություն կունենան ներկա գտնվելու Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի 2021-2022 թթ խաղաշրջանի ներկայացումներին: | |
| | | 45.4 «Քո արվեստը դպրոցում» ծրագիր | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ և աջակցությամբ Հայաստանի պետական ֆիլհարմոնիան 2021 թվականի ապրիլ-նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացրել է «Քո արվեստը դպրոցում» կրթական մշակութային ծրագիրը: Ծրագիրը ներառում է դասախոսություն-հանդիպումների շարք հայտնի արվեստագետների հետ՝ նախատեսված 8-12-րդ դասարանի աշակերտների համար:<br>Ծրագրի շրջանակներում տեղի են ունեցել 30 հանդիպում Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Ընդհանուր հանդիպումներին մասնակցել են 600 դպրոցի մոտ 2500 սան և մանկավարժ: Ծրագրի շնորհիվ հայաստանյան դպրոցների աշակերտները հնարավորություն են ստացել ծանոթանալ ներկայիս հայտնի արվեստագետներին՝ արվեստի և մշակույթի տարբեր ոլորտներից: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Հանդիպումների տեսագրությունները տեղադրվում են ծրագրի ֆեյսբուքյան էջում https://www.facebook.com/arttoschool և յութուբյան ալիքում https://www.youtube.com/channel/UCNrk3j1hnxgMh5GymEJ98wA: | |
| | | 45.5 «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի իրականացում | «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիրն ուղղված է 11-20 տարեկան առավել տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների (դասական երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ) զարգացմանը, կատարելագործմանը և խրախուսմանը՝ հետագայում միջազգային ասպարեզում հայկական կատարողական արվեստը ներկայացնելու նպատակով: 2021 թվականին ծրագրում ընդգրկել են 15 տաղանդավոր երիտասարդ երաժիշտ-կատարող և 6 առաջատար մասնագետ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ մասնագիտություններով: Հաշվետու ժամանակահատվածում «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի 13 շնորհալի երեխաներ մասնակցել են 18 առցանց երաժշտական միջազգային մրցույթներին և արժանացել են 1-ին և 2-րդ մրցանակներին:<br>Ծրագրի անդամները մի շարք վարպետության դասեր են ստացել աշխարհի լավագույն մասնագետներից, ինչպիսիք են. Նաթալիա Տրուլ՝ ՌԴ, Դագլաս Համփֆրիս՝ ԱՄՆ, Անտոնիո դի Քրիստոֆանո՝ Իտալիա, Թամաշ Ունգար՝ ԱՄՆ, Անդրե Սեվերին՝ Հոլանդիա, Ալբերտ Տյու՝ Սինգապուր և այլոք:<br>Ծրագրի անդամները Առնո Բաբաջանյանի 100 և Ալ. Սպենդիարյանի 150-ամյակներին նվիրված համերգներով հանդես են եկել ՀՀ Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Շիրակի մարզերում, ինչպես նաև մասնակցել են Մոսկվայում կայացած Ա.Բաբաջանյանին նվիրված համերգին և «We gather friends» XV-րդ միջազգային փառատոնին:<br>«Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև վարպետության դասեր՝ երիտասարդ մասնագետների մասնակցությամբ. միջազգային մրցույթների դափնեկիր Անուշ Նիկողոսյան (ջութակ), միջազգային մրցույթների դափնեկիր Արմեն Մանասյան (դաշնամուր), միջազգային մրցույթների դափնեկիր, Triomphe de l’Art և ՀԲԸՄ մրցույթների ժյուրիի մշտական անդամ, «Avanesyan Trio»-ի համահիմնադիր Սևակ Ավանեսյան (թավջութակ), Brescia Classica (Իտալիա) | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | և Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթների դափնեկիր Հռիփսիմե Աղաքանյան (դաշնամուր) և այլն: Վարպետության դասերին մասնակցել են շուրջ 100 շնորհալի պատանի երաժիշտ-կատարող Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական ու արվեստի դպրոցներից: | |
| Սպորտ | | | | |
| 50 | Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման անընդհատության ապահովում | 50.1 «Հայաստանի Հանրապետությ յան Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի անցկացում | Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարը անցկացվել է 2021 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի «Շորժա-Սևանա լճի թերակղզի» ճանապարհահատվածում (40 կմ): Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ համագործակցելով «Հայաստանի հեծանվային մարզաձևերի ֆեդերացիա» ՀԿ-ի հետ:<br>Մրցաշարն անցկացվել է մեկ փուլով, երկու տարիքային խմբերով՝ 18-35 տարեկան կանայք, 18-40 տարեկան տղամարդիկ, 36 և բարձր տարիքի կանայք, 41 և բարձր տարիքի տղամարդիկ: Միջոցառմանը մասնակցել են շուրջ 350 հեծանվորդներ: Ծրագրի շրջանակներում մասնակիցներին հատկացվել են՝ մարզաշապիկներ, գլխարկներ, սնունդ, հավաստագրեր, շնորհակալագրեր, խոշոր դրամական պարգևներ: Միջոցառման մրցանակային ֆոնդը կազմել է 15 մլն. ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ 80 մասնակից տղամարդ և կին պարգևատրվել են դրամական մրցանակներով: Առաջին տեղի համար սահմանված էր 1 մլն ՀՀ դրամ մրցանակ, երկրորդ տեղի համար՝ 600 հազար ՀՀ դրամ, երրորդ տեղի համար՝ 400 հազար ՀՀ դրամ, չորրորդ տեղի համար՝ 150 հազար ՀՀ դրամ, հինգերորդ տեղի համար՝ 100 հազար ՀՀ դրամ: Դրամական խրախուսումներ էին նախատեսված նաև 6-10-րդ տեղեր գրավածների համար՝ 75-հազարական դրամ, իսկ 11-20-րդ տեղերի համար՝ 50-հազարական դրամ: | |
| | | 50.2 «Հայաստանի Հանրապետությ յան Վարչապետի գավաթ» | | 2021 թվակա-նին միջոցա-ռումը չի իրա-կանացվել: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում | | 2021 թվականի հոկտեմբերի 30-ին կայացած «Հայաստանի Հանրապետության Վարչա-պետի գա-վաթ» սիրողա-կան խճու-ղավազքի մրցաշարի ամփոփման ժամանակ կայացած քննարման արդյունքում որոշում է կայացվել մրցաշարը անցկացնել 2022 թվականի մարտ ամսին: Ժամկետ՝ 2021-2026թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| | | 50.4 «Հայաստանի Հանրապետութ յան Վարչապետի գավաթ» | «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղավազքի մրցաշարը անցկացվել է 2021 թվականի հոկտեմբերի 30-ին ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար-Էջմիածին ճանապարհահատվածում: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | խճուղավազքի մրցաշարի անցկացում | Նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ համագործակցելով «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի հետ: Մրցաշարը անցկացվել է մեկ փուլով, երեք տարիքային խմբերով՝<br>• 15-17 տարեկան տղաներ և աղջիկներ (3 կմ),<br>• 18-35 տարեկան կանայք, 18-40 տարեկան տղամարդիկ (10 կմ),<br>• 36 և բարձր տարիքի կանայք, 41 և բարձր տարիքի տղամարդիկ (10 կմ):<br>Միջոցառմանը մասնակցել է շուրջ 1500 մարդ: Մասնակիցներին հատկացվել են՝ մարզաշապիկներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, դրամական պարգևներ: Միջոցառման մրցանակային ֆոնդը կազմել է 15 մլն. ՀՀ դրամ:<br>Ընդհանուր առմամբ 86 մասնակից պարգևատրվել է դրամական մրցանակներով և 6 համակարգիչներով: 1-ին տարիքային խմբի 1-3 տեղերը գրաված մասնակից տղաները և աղջիկները պարգևատրվել են համակարգիչներով (notebook): 2-րդ և 3-րդ տարիքային խմբերի մասնակից տղամարդիկ և կանայք պարգևատրվել են դրամական մրցանակներով: Առաջին տեղի համար սահմանված էր 1 մլն ՀՀ դրամ մրցանակ, երկրորդ տեղի համար՝ 600 հազար ՀՀ դրամ, երրորդ տեղի համար՝ 400 հազար ՀՀ դրամ, չորրորդ տեղի համար՝ 150 հազար ՀՀ դրամ, հինգերորդ տեղի համար՝ 100 հազար ՀՀ դրամ: Դրամական խրախուսումներ էին նախատեսված նաև 6-10-րդ տեղեր գրավածների համար՝ 75-հազարական դրամ, իսկ 11-20-րդ տեղերի համար՝ 50-հազարական դրամ: | |